ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 228-Ա

## ԱՆՈՒՇ ԼԵՎՈՆԻ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 22-րդ մասի, 22.1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի թիվ 259-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգի» 14-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչատնտեսական մասի համակարգողների թափուր տեղերը զբաղեցնելու համար հավակնորդների հետ հարցազրույցներ անցկացնելու նպատակով ձևավորված հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, հաշվի առնելով Անուշ Ոսկանյանի 2026 թվականի հոկտեմբերի 8-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Անուշ Լևոնի Ոսկանյանին 2026 թվականի հոկտեմբերի 29-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2026-10-27 17:19:47 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026թ. հոկտեմբերի 27
ք.Իջևան